


## 28. Իրավախախտումներ

**28.4. Բնապահպանության իրավախախտումներ:** 2002թ. ՀՀ բնապահպանության նախարարության տարածքային տեսչությունների կողմից ստուգվել է 1563 օբյեկտ՝ 2001թ. 1692-ի դիմաց: Հայտնաբերվել է բնապահպանության օրենսդրության խախտումների 1148 դեպք, որի 8.7%-ը բաժին է ընկել ընդերքի, 31.5%-ը՝ ջրային պաշարների, 30.6%-ը՝ մթնոլորտային օդի, 12.2%-ը՝ հողային պաշարների, 11.0%-ը՝ բուսական և 6.0%-ը՝ կենդանական աշխարհի պահպանության իրավախախտումներին: 2001թ. համեմատ հայտնաբերված իրավախախտումների քանակը նվազել է 239-ով կամ 17.2%-ով: Բնապահպանության օրենսդրության հայտնաբերված իրավախախտումներից 406-ը կամ 35.4%-ը (2001թ.՝ 463 կամ 33.4%) վերացվել է ստուգումների ժամանակ սահմանված ժամկետներում:

Բնապահպանության օրենսդրության խախտումներն ըստ բնապահպանության ուղղությունների, 2002թ.


		Խախտումների քանակը, միավոր	Խախտումների քանակը, 100000 բնակչի հաշվով
Ընդերքի	հայտնաբերվել են	100	3.1
	վերացվել են	15	0.5
Ջրային պաշարների	հայտնաբերվել են	362	11.3
	վերացվել են	111	3.5
Օդային ավազանի	հայտնաբերվել են	351	11.0
	վերացվել են	61	1.9
Հողային պաշարների	հայտնաբերվել են	140	4.4
	վերացվել են	98	3.1
Բուսական աշխարհի	հայտնաբերվել են	126	3.9
	վերացվել են	106	3.3
Կենդանական աշխարհի	հայտնաբերվել են	69	2.2
	վերացվել են	15	0.5
Ընդամենը	հայտնաբերվել են	1148	35.7
	վերացվել են	406	12.7

Բնապահպանության օրենսդրության խախտումների քանակը, 2002թ., միավոր



2002թ.

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ  
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 100000 ԲՆԱԿԶԻ ՀԱՇՎՈՎ



Վարչական տույժի է ենթարկվել 861 անձ: Սահմանվել է 1.8 մլն. դրամի տուգանք, որի 33.3%-ը՝ ջրային պաշարների, 16.7%-ը՝ մթնոլորտային օդի, 11.1%-ը՝ հողային պաշարների, 22.8%-ը՝ բուսական և 11.1%-ը՝ կենդանական աշխարհի պահպանության օրենսդրության խախտումներով պայմանավորված տուգանքներն են:

**Վարչական տույժերն ըստ բնապահպանության ուղղությունների, 2002թ.**

	Վարչական տույժի ենթարկվածների թվաքանակը, մարդ	Վարչական տույժի համար սահմանված գումարը, հազ. դրամ	Վարչական տույժի համար սահմանված գումարը վարչական տույժի ենթարկված մեկ անձի հաշվով, հազ. դրամ
Ընդերքի	-	-	-
Ջրային պաշարների	288	592.3	2.1
Օդային ավազանի	306	318	1.0
Հողային պաշարների	119	215	1.8
Բուսական աշխարհի	73	443.3	6.1
Կենդանական աշխարհի	75	193.9	2.6
Ընդամենը	861	1762.5	2.0

Կազմվել է վնասի հատուցման 310 արձանագրություն՝ 2001թ. 354-ի դիմաց: Վնասի հատուցման գումարը կազմել է 33.7 մլն. դրամ (2001թ.՝ 181.5 մլն դրամ), որի 3.3%-ը՝ ջրային պաշարների, 29.4%-ը՝ մթնոլորտային օդի, 4.7%-ը՝ հողային պաշարների, 62.0%-ը՝ բուսական և 0.6%-ը՝ կենդանական աշխարհին հասցված վնասի հատուցման համար սահմանված գումարն է:

**Վնասի հատուցման արձանագրություններն ըստ բնապահպանության ուղղությունների, 2002թ.**

	Վնասի հատուցման արձանագրությունների քանակը, միավոր	Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների, հազ. դրամ	Վնասի հատուցման գումարը մեկ արձանագրության հաշվով, հազ. դրամ
Ջրային պաշարների	56	1118.7	20.0
Օդային ավազանի	58	9898.9	170.7
Հողային պաշարների	59	1549.7	26.3
Բուսական աշխարհի	100	20888.5	208.9
Կենդանական աշխարհի	37	205.8	5.6
Ընդամենը	310	33661.6	108.6

2002թ. բնապահպանության օրենսդրության խախտումների առնչությամբ դատաքննչական մարմիններին հանձնվել է 59 նյութ՝ 2001թ. 166-ի դիմաց:

2002թ. բնապահպանության օրենսդրության խախտումների հետևանքով առգրավվել են ձկնագողության 22 (2001թ.՝ 102), որսագողության 10 (2001թ.՝ 30) պարագաներ, 6017 հատ ձուկ (2001թ.՝ 47276) և 173.5 խոր. մ փայտանյութ (2001թ.՝ 535 խոր. մ):

Բնապահպանական (էկոլոգիական) եզրակացության և էկոփորձաքննության են ներկայացվել սահմանային թույլատրելի արտանետումների և արտահոսքերի սահմանման 66, գործունեության թույլտվության 35 և էկոփորձաքննության 7 նյութեր (բոլորն էլ հաստատվել են):

**Բնապահպանության օրենսդրության խախտումների տեսակարար ցուցանիշներն ըստ մարզերի, 2002թ.**

	Հայտնաբերված խախտումների քանակը		Վարչական տույժի համար սահմանված գումարը, հազ. դրամ		Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների, հազ. դրամ	
	ընդամենը	100000 բնակչի հաշվով	ընդամենը	վարչական տույժի ենթարկված մեկ անձի հաշվով	ընդամենը	մեկ արձանագրության հաշվով
ք.Երևան	233	21.1	240.5	1.1	7502.7	750.3
Արագածոտն	40	28.9	72.5	2.1	35.1	7.0
Արարատ	226	83.1	233.1	1.4	1018.7	26.1
Արմավիր	73	26.4	119.5	4.4	36.5	18.3
Գեղարքունիք	52	21.9	79.6	1.9	710.8	33.8
Լոռի	73	25.6	28.1	0.9	2560.4	82.6
Կոտայք	90	33.0	78.5	1.0	2453.0	408.8
Շիրակ	125	44.2	177.5	1.4	978.0	22.7
Սյունիք	53	34.7	272.3	10.5	8670.0	1445.0
Վայոց ձոր	47	84.0	367.4	7.8	376.7	15.7
Տավուշ	136	101.3	93.5	1.4	9319.7	75.8
Ընդամենը ՀՀ	1148	35.7	1762.5	2.0	33661.6	108.6

**Բնապահպանության օրենսդրության խախտումների քանակը, 1997-2002թթ., միավոր**

